Հաստատված է
ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ գիտական խորհրդի
«07» նոյեմբերի 2022 թ. թիվ 173 նիստում
ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ տնօրեն
_____ Ա. Սարգսյան

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ԳԱԱ ԳԻՏԱԿՐԹԱԿԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆԻ ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅԱՆ ԱՄԲԻՈՆԻՆ ԿԻՑ ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԴԻՏԱՐԱՆԻ

(Նոր խմբագրությամբ)

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1. ՀՀ ԳԱԱ գիտակրթական միջազգային կենտրոնի հոգեբանության ամբիոնին կից հոգեբանական դիտարանը (այսուհետև՝ Դիտարան) ՀՀ ԳԱԱ գիտակրթական միջազգային կենտրոնի (այսուհետև՝ ԳԿՄԿ) կառուցվածքային ստորաբաժանում է:

1.2. Դիտարանի լրիվ անվանումն է՝ *ՀՀ ԳԱԱ գիտակրթական միջազգային կենտրոնի հոգեբանության ամբիոնին կից հոգեբանական դիտարան:*

1.3. Դիտարանի կրճատ անվանումն է՝ ՀՀ Հոգեբանական դիտարան:

Դիտարանի ռուսերեն անվանումն է՝ Психологическая обсерватория при кафедре психологии Международного научно-образовательного центра академии наук Республики Армения.

Դիտարանի անգլերեն անվանումն է՝ *Psychological Observatory Adjunct to The International Scientific-Educational Center of the National Academy of Sciences of Armenia.*

Դիտարանի հասցեն է՝ Մ. Բաղրամյան 24դ, 0019 Երևան:

1.4 Դիտարանն իր գործունեության ընթացքում ղեկավարվում է ՀՀ օրենսդրությամբ, ԳԿՄԿ կանոնադրությամբ, ԳԿՄԿ կառավարման մարմինների որոշումներով, ԳԿՄԿ ներքին կարգապահական կանոններով, սույն կանոնադրությամբ և այլ իրավական ակտերով:

1.5. Դիտարանի գործունեության վերաբերյալ տեղեկատվությունը ներկայացված է ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ պաշտոնական կայքէջում՝ հետևյալ հասցեով՝ http://www.isec..am/:

1.6. Դիտարանը կարող է ունենալ ձևաթուղթ:

2. Դիտարանի նպատակը և խնդիրները

Դիտարանի գործունեության նպատակն է՝

2.1. նպաստել հոգեբանության գիտակարգի զարգացմանը, գիտահետազոտական ծրագրերի իրականացմանը, հանրապետական և միջազգային գիտական ծրագրերում մասնագիտական ներուժի արդյունավետ օգտագործմանը,

2.2. նպաստել հոգեբանության գիտակարգի արդի հիմնախնդիրների վերհանմանն ու լուսաբանմանը,

2.3 աջակցել վարժանքների և պրակտիկայի միջոցով հոգեբանություն մասնագիտացմամբ ուսանողների, ասպիրանտների ու գիտությամբ և գործնական հոգեբանությամբ զբաղվող մասնագետների կրթության և մասնագիտական որակավորումների բարձրացմանը:

3. Դիտարանի գործունեության հիմնական ուղղությունները

3.1 Մասնակցություն դրամաշնորհային ծրագրերին, գիտահետազոտական աշխատանքների իրականացում, արդյունքների վերլուծություն և հանրայնացում,

3.2 պրոֆեսորադասախոսական անձնակազմի և հոգեկան առողջության ոլորտի մասնագետների մասնագիտական կրթության, հմտությունների ու կարողությունների զարգացում,

3.3 մասնագիտական սուպերվիզիայի իրականացում,

3.4 ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ և այլ բուհերի ու գիտակրթական կենտրոնների հոգեբանության բաժինների մագիստրատուրայի ուսանողների մասնագիտական պրակտիկայի իրականացման աջակցում:

4. Դիտարանի գործառույթերը

4.1 Հիմնարար, տեսական, կիրառական, փորձարարական գիտական և գիտամեթոդական հետազոտություններ իրականացում,

4.2 գիտահետազոտական գործունեության ընթացքում համապատասխան փաստաթղթաշրջանառություն (գիտափորձերի մասնակիցների, ինչպես նաև հաստատությունների դիտորդական խորհուրդների հետ համաձայնագրերի կնքում և այլն) կազմակերպում և իրականացում,

4.3 մասնագիտական և գիտահետազոտական էթիկայի նորմերի պահպանում և վերահսկողության իրականացում,

4.4 հետազոտությունների մասնակիցների մոնիթորինգի ընթացքում անվտանգության կանոնների պահպանում և վերահսկողության իրականացում,

4.5 հոգեբանական միջազգային գիտական և հասարակական կառույցների հետ փոխհարաբերությունների հաստատում, ամրապնդում և զարգացում,

4.6 գիտաժողովների, սեմինարների, քննարկումների կազմակերպում,

4.7 հոգեբանական գիտական ամսագրերի, ժողովածուների ստեղծում, գրախոսման, տպագրական աշխատանքների իրականացում,

4.8 հոգեբանական խորհրդատվության բնագավառում հավատարմագրման համակարգի մշակում:

5. Դիտարանի կառավարումը և կառուցվածքը

5.1. Դիտարանի աշխատանքերի վերահսկումը իրականացնում է ԳԿՄԿ հոգեբանության ամբիոնի վարիչը, որի *իրավունքներն են՝*

5.1.1. վերահսկել Դիտարանի ընթացիկ գործունեությունը,

5.1.2. ներկայացնել առաջարկություններ ԳԿՄԿ տնօրենին՝ Դիտարանի աշխատողներին խրախուսելու կամ կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ,

5.1.3 ներկայացնել առաջարկություններ Դիտարանի գործունեությունն առավել արդյունավետ կազմակերպելու նպատակով,

5.1.4. Դիտարանի համակարգողի բացակայության ժամանակ տնօրենին առաջարկություն ներկայացնել համակարգողի ժամանակավոր պաշտոնակատար նշանակելու վերաբերյալ:

5.2 Դիտարանի ընթացիկ գործունեությունը ղեկավարում է Դիտարանի համակարգողը, ում աշխատանքի ընդունում և աշխատանքից ազատում է ԳԿՄԿ տնօրենը՝ ամբիոնի վարիչի առաջարկությամբ:

5.3.Դիտարանի համակարգողը.

5.3.1 հետևում է Դիտարանի մասնագիտական և ֆինանսական գործունեության կատարմանը,

5.3.2 կազմակերպում և ղեկավարում է Դիտարանի ընթացիկ ախատանքները,

5.3.3. պատշաճ կարգով կազմակերպում է Դիտարանում տարվող գործավարությունը:

6. Դիտարանի գործունեության կազմակերպումը

6.1. Դիտարանի հաստիքացուցակը սահմանում է ԳԿՄԿ տնօրենը:

6.2.Դիտարանի կառուցվածքի կարող են ներգրավվել խորհրդատվական, գիտահետազոտական, վերապատրաստողների մասնագիտական խմբեր:

6.2.1. Հոգեբանական խորհրդատվության խումբը իրականացնում է ԳԿՄԿ ուսանողների, աշխատողների, կազմակերպությունների և բնակչության հետ անհատական և խմբային խորհրդատվական աշխատանքներ:

6.2.2. Գիտահետազոտական խումբը իրականացնում է հոգեբանական հետազոտական աշխատանքներ, մասնագիտական և գիտահետազոտական էթիկայի նորմերի պահպանություն և վերահսկողություն, հետազոտությունների մասնակիցների մոնիթորինգի ընթացքում անվտանգության կանոնների պահպանություն և վերահսկողություն:

6.2.3.Վերապատրաստողների խումբը իրականացնում է մասնագիտական որակավորումների բարձրացման ու վերապատրաստումների դասընթացներ և մասնագիտական թրեյնինգներ:

7.Երափակիչ դրույթներ

7.1 Դիտարանը կարող է վերակազմակերպվել կամ լուծարվել ԳԿՄԿ տնօրենի ներկայացմամբ՝ ԳԿՄԿ գիտական խորհրդի որոշմամբ:

7.2 Սույն կանոնադրությունը կարող է լրացվել կամ փոփոխվել ԳԿՄԿ տնօրենի ներկայացմամբ՝ ԳԿՄԿ գիտական խորհրդի որոշմամբ: